ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ,
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ
ՎՃԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ በ Վ Ա Ն Դ Ա Կ በՒ Թ Յ በՒ Ն

1.	Ներածական մաս 3
2.	Ընդհանուր մաս 4
3.	Կատարողականի հաշվեքննության արդյունքներ10
4.	Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն35
5.	Առաջարկություններ37
6.	Հավելվածներ39

Հաշվեքննության հիմքը

< հաշվեքննիչ պալատի 2020թ. դեկտեմբերի 3-ի թիվ 207-Ա որոշում (փոփոխություններ՝ << հաշվեքննիչ պալատի՝ 2021 թվականի մարտի 19-ի թիվ 70-Ա որոշում, 2021 թվականի հուլիսի 30-ի թիվ 204-Ա որոշում, 2021 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 268-Ա որոշում, 2021 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 320-Ա որոշում)

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն

Հաշվեքննության առարկան

Կենսաթոշակառուների ցանկերի ձևավորում, կենսաթոշակների նշանակում, կենսաթոշակների վճարման իրականացում

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ։

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020թ. դեկտեմբերի 14-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ։

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր։

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը։

ւ. Ներածական մաս

II. ይህጉሩ**ሀ**ህበՒቦ ሆ<mark>ሀ</mark>ሀ

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2019թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 360,527,573.4 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 358,855,407.9 հազ. դրամ։ Հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի ծախսը կազմել է 352,061,838.8 հազ. դրամ։

2019-ի ընթացքում ՍԱԾ-ի կողմից կենսաթոշակային ապահովում (ծրագրի դասիչ՝ 1102) միջոցառման շրջանակներում պլանավորումը կազմել է 255,291,705.12 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 254,580,267.92 հազ. դրամ և փաստացի ծախսվել է 252,645,236.08 հազ. դրամ։ Ծախսման ուղղությունները ներկայացվում են ստորև աղլուսակ 1-ում։

Աղյուսակ 1 հացար դրամ

Անվանում	Ծրագիր/միջոցառում	Տարեկան պլան	Ճշտված պլան	Փաստացի ծախս
<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառալություն		360,527,573.4	358,855,407.9	352,061,838.8
Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում	1102	255,291,705.12	254,580,267.92	252,645,236.08
Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում	1102-11001	79,400.00	85,835.00	46,435.00
Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում	1102-11002	1,546,107.50	1,546,107.50	1,395,682.32

Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն	1102-11003	634.30	634.30	490.00
Աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու համար աշխատանքների իրականացման ապահովում	1102-11005	0.00	73,500.00	23,368.71
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	1102-12001	27,510,488.70	27,830,488.70	27,623,759.20
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	1102-12002	559,085.70	562,750.70	561,357.03
Աշխատանքային կենսաթոշակներ	1102-12003	222,863,933.42	221,693,086.72	220,212,475.36
ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	1102-12004	2,732,055.50	2,786,769.00	2,780,572.46
Սոցիալական ապահովության ծառայության տեխնիկական հագեցվածության ապահովում	1102-31001	0.00	1096.00	1096.00
Ընդամենը		255,291,705.12	254,580,267.92	252,645,236.08

Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 85,835.0 հազ. դրամ գումար։ 2019թ. ընթացքում փաստացի ըստ ոչ ֆինանսական 46,435.0 ցուցանիշների ծախսվել գումար։ hwq. դրամ Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվածից 39,400.0 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է երկու պայմանագրերով նախատեսված ծառայությունների չկատարման պատճառով ՍԱԾ-ի կողմից պայմանագրերի միակողմանի լուծման արդյունքում չֆինանսավորմամբ։

Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի քանակը կազմեր 55,000 հատ՝ 634.3 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով։ 2019թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 55,000 հատ ձևաթղթերի տպագրության ծախսը կազմել է 490.0 հազ. դրամ։ Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 144.3 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է առաջարկված գնի արդյունքում տնտեսված գումարով։

Աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու համար աշխատանքների իրականացման ապահովում միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է 73,500.0 հազ. դրամ տրամադրվեր 350,000 աշխատանքային գրքույկների ներբեռնման համար։ 2019թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 23,368.71 հազ. դրամ 117,110 աշխատանքային գրքույկի համար։ Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 50,131.29 hwq. դրամ պակաս տրամադրելը և 232,890 աշխատանքային գրքույկ պակաս ներբեռնելը պայմանավորված է աշխատանքային գրքույկների չհավաքագրման (չեն ներկայացվել ՍԱԾ գործատուների կողմից) արդլունքում կատարած աշխատանքների ծավալի նվազմամբ։

Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 27,830,488.7 հազ. դրամ՝ 32,886 շահառուի համար։ 2019թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 27,623,759.2 հազ. դրամ՝ 30,905 շահառուի։

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի թվով 1,761 շահառուի պետք է տրամադրվեր 562,750.7 հազ. դրամ գումար։ 2019թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 561,357.03 հազ. դրամ գումար՝ 1,725 շահառուի։

Աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է 459,050 շահառուի տրամադրվեր 221,693,086.72 հազ. դրամ գումար։ 2019թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 446,195 շահառուի տրամադրվել է 220,212,475.36 հազ. դրամ գումար։

Հ< օրենքով նշանակված կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ տարեկան ճշտված պլանի պետք է 671 շահառուի տրամադրվեր 2,786,769 հազ. դրամ գումար։ 2019թ. ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 2,780,572.46 հազ. դրամ գումար՝ 663 շահառուի։</p>

Հաշվեքննության ընացքում առաջացած առանձին տվյալների համադրման անհրաժեշտությամբ պայմանավորված, կենսաթոշակառուների ցանկերի ձևավորման և կենսաթոշակների նշանակման ուսումնասիրության նպատակով 2021 թվականի մարտի 23-ին թիվ ՀՊԵ-ԱԲ-73 գրույամբ հարցում է կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ 2019 թվականի ընթացքում ըստ ամիսների վճարված եկամտային հարկի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով։

<< պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտնվել է, որ խնդրարկվող տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման։ << պետական եկամուտների կոմիտեի կողմից 2021 թվականի մարտի 30-ի թիվ 71-6/17612-2021 գրությամբ մեկնաբանվել է հետևյալը՝

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվեքննիչ պալատի հարցման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները տրամադրում են տեղեկատվություն իրենց կողմից հաշվեքննության օբյեկտի կամ հաշվեքննության առարկայի՝ հաշվեքննությունն ընդգրկող

ժամանակաշրջանի վերաբերյալ իրականացված վերահսկողության, հսկողության, ստուգումների, ներքին աուդիտի արդյունքների մասին կամ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննությանը վերաբերող պահանջված այլ տեղեկատվություն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով։

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի համաձայն՝ հարկային գաղտնիք է համարվում հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած բացառությամբ՝ տեղեկատվություն, հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների, հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության, հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների, հարկային հարաբերությունները կարգավորող և իրավական ակտերի պահանջների խախտման կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների, հարկ վճարողի կամ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ հարկ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային մաքսային մարմիններ կամ ներկայացվող տեղեկությունների՝ այդ մարմիններ ներկայացնելու դեպքում, հարկ վճարողի կողմից հաշվետու ամսվա ընթացքում աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա հայտարարագրված աշխատողների թվի վերաբերյալ տեղեկատվության, միասնական հաշվի միջոցով մարված պարտավորությունների, ինչպես նաև միասնական հաշվի միջոցով չմարվող հարկերի, վճարների և պետական տուրքի գծով պարտավորությունների մարման վերաբերյալ վճարողի հարկման վերաբերյալ տեղեկատվության, հարկ համակարգի տեղեկատվության, ՀՀ հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված և սույն կետում չնշված՝ հրապարակման ենթակա տեղեկությունների։

ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) պարտավոր է պահպանել հարկային գաղտնիքը, հարկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի

Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին։

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը։

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով։

Նույն օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողները կամ սույն օրենքով նախատեսված այլ անձինք պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո։

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ << հաշվեքննիչ պալատի կողմից << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունում իրականացվող հաշվեքննության շրջանակներում վերոնշյալ գրությամբ խնդրարկվել է օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկատվություն (կից ցանկում նշված անձանց վճարած եկամտային հարկի վերաբերյալ) և բացակայում են իրավական հիմքերը դրանք << հաշվեքննիչ պալատին տրամադրելու համար՝ հետևաբար հայտնվել է, որ խնդրարկվող տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման։

III. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տնտեսման արդյունավետության տեսանկյունից

1. Ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայության կողմից 2019թ. ընթացքում, «Հայփոստ» ՓԲԸ-ի և բանկերի միջոցով, շահառուներին փաստացի վճարվել է 271,430,016.8 հազ. դրամ։ Վերոնշյալ կազմակերպություններին, փոխադարձ հաշվարկի ակտերի համաձայն, փաստացի վճարվել է 1,408,856.06 հազ. դրամ՝ ընդհանուր առմամբ 6,516,243 անգամ վճարման գործրնթաց իրականացնելու համար (տես հավելված 1 և 2)։

2010թ.-ի դեկտեմբերի 29-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված պայամանագրի 3-րդ կետի hամաձայն՝ ծառայության վճարր սահմանվել է կենսաթոշակառուներին տրամադրված կենսաթոշակի գումարի 1 տոկոսի չափով։ 2019թ-ի ընթացքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով, վճարումների չափը կազմել է 131,536,082.02 հազ. դրամ (48,4 տոկոսը)։ Վերոնշյալ պայմանագրի համաձայն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին վճարվել է 1,315,360.81 հազ. դրամ՝ 3,399,735 անգամ վճարման գործընթաց իրականացնելու համար (Կենսաթոշակ և այլ վճարատեսակ, Թաղման նպաստ, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճար, Չոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճարներ, Մինչև երկու տարեկան երեխալի խնամքի նպաստ, Երեխալի ծննդյան միանվագ նպաստ), ընդ որում կենսաթոշակների և այլ վճարատեսակների ծառալության իրականացման նպատակով ծառալության վճարը կազմել է 1,256,082.017 հազար դրամ՝ 3,251,305.0 անգամ վճարման գործընթաց իրականացնելու դիմաց։

Առևտրային բանկերի հետ՝ կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերի 3-րդ բաժնի համաձայն, նախատեսված ծառայությունների համար, յուրաքանչյուր կենսաթոշակառուի

համար փոխհատուցվող գումարի չափը սահմանվել է ամսական 30 դրամ։ 2019թ.-ի ընթացքում, բանկերի միջոցով ընդհանուր վճարումների չափը կազմել է 139,893,934.8 հազ. դրամ (51,6 տոկոսը), որի դիմաց բանկերին վճարվել է 93,225.7 հազ. դրամ ծառայության վճար՝ 3,107,524 անգամ վճարում իրականացնելու համար (Կենսաթոշակ և այլ վճարատեսակ, Թաղման նպաստ, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճար, Ջոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճարներ, Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, Երեխայի ծննդյան միանվագ նպաստ), ընդ որում կենսաթոշակների և այլ վճարատեսակների ծառայության իրականացման նպատակով ծառայության վճարը կազմել է 89,250.180 հազ. դրամ՝ 2,975,006 անգամ վճարման գործընթաց իրականացնելու դիմաց։

Ինչպես երևում է, «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով 2019 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ շահառուների միջև բաշխվել է 131,536,082.02 հազ. դրամ, իսկ առևտրային բանկերի միջոցով շահառուների միջև բաշխվել է 139,893,934.8 հազ. դրամ։ Առևտրային բանկերի միջոցով բաշխվել է 8,357,852.78 հազ. դրամով ավելի գումար։

«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է 3,399,735 վճարման գործընթաց, առևտրային բանկերի կողմից իրականացվել է 3,107,524 վճարման գործընթաց։ Առևտրային բանկերի միջոցով (առանց «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ուժային կառույցների շահառուների համար իրականացված վճարման գործընթացների հաշվարկի) իրականացվել է 208,811 հատով պակաս գործընթաց։

«Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով վճարումների իրականացման գործընթացը ապահովելու նպատակով վճարվել է 1,315,360.8 հազար դրամ, բանկերի միջոցով՝ 93,225.7 հազ. դրամ։ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով վճարումների իրականացման գործընթացը ապահովելու նպատակով վճարվել է 1,185,469.4 հազ. դրամով ավելի գումար (առանց «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ուժային կառույցների շահառուների համար իրականացված վճարման գործընթացների հաշվարկի)։

Իրականացված մեկ վճարման գործընթացի մասով «Հայփոստ» ՓԲԸ-ին վճարվել է 386.9 ՀՀ դրամ, իսկ առևտրային բանկերին վճարվել է 30 դրամ։ Վճարման գործընթացի կազմակերպումը «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով մեկ վճարման գործընթացի հաշվարկով մոտ 12.9 անգամ ավելի է։

Տնտեսման արդյունավետության տեսակետից ավելի նպատակահարմար է զգալիորեն և հնարավորության սահմաններում ավելացնել վճարումների գործընթացի կազմակերպումը առևտրային բանկերի միջոցով։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հայտնվել է, որ 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 2048-Ն որոշմամբ, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում, սահմանվել է պատվիրատուի կողմից կատարողին մատուցած ծառայությունների համար միջնորդավճարի նոր չափեր, իսկ առևտրային բանկերի կողմից 2020 թվականի հուլիսի 1-ից՝ Կառավարության 12.03.2020 թիվ 284-Ն որոշմամբ, 2020 թվականի հոկտեմբերի 1-ից՝ Կառավարության 12.03.2020 թիվ 287-Ն որոշմամբ ծառայությունը մատուցվում է անվճար։

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն։ Հաշվի առնելով, որ ըստ ներկայացված բացատրության առևտրային բանկերի միջոցով այլևս ծառայության վճար նախատեսված չէ առավել ևս տնտեսման արդյունավետության տեսակետից ավելի նպատակահարմար է զգալիորեն և հնարավորության սահմաններում ավելացնել վճարումների գործընթացի կազմակերպումը առևտրային բանկերի միջոցով։

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

2. << կառավարության 2011թ.-ի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի՝ կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային

ստաժը հաշվարկելու կանոնների, 4-րդ կետի համաձայն, կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչև 6 ամիս (180 օր) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ։

Այսպիսով՝ 6 ամիս և ավելի ստաժը ընդունվում է որպես մեկ տարվա աշխատանքային ստաժ, իսկ մինչև 6 ամիսը՝ ստաժ հանվում է աշխատանքային ստաժի հանրագումարից։

Ստացվում է, որ 6 ամսից գոնե մեկ օր պակաս աշխատանքային ստաժ ունեցող շահառուների մասով՝ 20-40 տարիների աշխատանքային ստաժ ունեցողների համար կենսաթոշակի գումարը մոտ 800-1200 դրամի չափով քիչ է հաշվարկվում, հետևաբար կորում է տվյալ շահառուների փաստացի աշխատանքային ստաժը։

Իսկ 6 ամսից գոնե մեկ օր ավել աշխատանքային ստաժ ունեցող շահառուների մասով՝ 20-40 տարիների աշխատանքային ստաժ ունեցողների համար կենսաթոշակի գումարը մոտ 800-1200 դրամի չափով ավել է հաշվարկվում, հետևաբար տվյալ շահառուների համար լրացուցիչ հաշվարկվում է փաստացի չաշխատած աշխատանքային ստաժը։

Նպատակային արդյունավետության տեսակետից առավել ճշգրիտ և նպատակային կլինի աշխատանքային ստաժի հաշվառումը ոչ լիարժեք տարվա համար իրականացնել հստակ հաշվի առնելով փաստացի աշխատած ամիսները և օրերը։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայցվել։

3. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ անկանխիկ կամ կանխիկ

եղանակով։ Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին։

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկալացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ lı հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ՀՀ 9-րդ կետի համաձայն կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում։ Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում։ Նույն հոդվածի 11, 12-րդ կետերի համաձայն կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը։ Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվանից հետո կենսաթոշակը տվյալ լիազորագրով չի վճարվում։

Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ կետի 2, 2.1 2.2 և 3-րդ ենթակետերի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝

Կենսաթոշակառուին (կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

Եթե կենսաթոշակը վճարվում է լիազորագրով (ներկայացվել է կենսաթոշակը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուամսյա ժամկետը լրանալու դեպքում.

եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուն տասներկու ամիս անընդմեջ բացակայում է Հայաստանի Հանրապետությունից (կենսաթոշակը կենսաթոշակառուի օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին վճարվելու դեպքում).

Սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում։

Ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության և ՍԱԾ-ի կողմից տրամադրված՝ շահառուներին վճարված կենսաթոշակի գումարների վերաբերյալ տեղեկատվության համադրության արդյունքում պարզվեց, որ

- 1. «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացված վճարումների մասով 237 դեպքում՝ 144 շահառուների վճարվել է 9,176.3 հազ. դրամ այն պարագայում, որ տվյալ շահառուները վճարման իրականացման պահին Հայաստանի Հանրապետությունում չեն եղել, և տվյալների շտեմարանի համաձայն առկա չէ լիազորագիր,
- 1.1 «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացված վճարումների մասով 1,642 դեպքում՝ 372 շահառուների վճարվել է 70,498.5 հազ. դրամ այն պարագայում, որ տվյալ շահառուները վճարման իրականացման պահին Հայաստանի Հանրապետությունում չեն եղել։ Հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված մեկնաբանությունների համաձայն տվյալ շահառուների վճարումներն իրականացվել է լիազորված անձանց, մինչդեռ

- հաշվեքննության ընթացքում մեզ տրամադրված շտեմարանում լիազորված անձանց վերաբերյալ տեղեկատվություններ առկա չեն,
- 2. Առևտրային բանկերի միջոցով իրականացված վճարումների մասով 15 դեպք՝ 4 շահառուների վճարվել է 597.8 հազ. դրամ այն պարագայում, որ տվյալ շահառուները մեկ տարուց ավելի բացակայել են Հայաստանի Հանրապետությունից։

Վերը նշված շահառուները ներկայացված են Հավելված 3-ում, 3.1-ում և 4-ում։

Նպատակային արդյունավետության տեսակետից անհրաժեշտ է պահպանել վճարումների գործընթացի իրականացման << օրենսդրությամբ սահմանված դրույթները և կատարելագործել վճարումների իրականացման վերահսկողական գործընթացները։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Թիվ 3 հավելվածով՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից իրականացված վճարումների մասով ներկայացված 1879 դեպքից, կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության համաձայն, 1642 դեպքով համապատասխան շահառուների գործերում առկա է եղել լիազորագիր և վճարումը շահառուների բացակայության ընթացքում վճարվել է լիազորված անձանց, հետևապես բացակայում է որևէ անհամապատասխանություն։

Վճարումների անհամապատասխանությունների վերաբերյալ Ծառայությունը պարբերաբար արձագանքել է՝ համապատասխան գրություններ ներկայացնելով «Հայփոստ» ՓԲ ընկերություն և վճարումն իրականացնող բանկերին։

Հայտնում եմ նաև, որ վճարումների ապահովման ուղղությամբ պարբերաբար իրականացվում են վերահսկողության կատարելագործման աշխատանքներ՝ օրինակ՝ Ծառայությունը ՍԷԿՏ համակարգից ներկայումս ստանում է նաև շահառուների՝ մինչև երեք ամսվա բացակայությունների, ինչպես նաև բացակայությունների օրվա, ամսվա և տարեթվի վերաբերյալ տվյալները։

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն։ Հաշվի առնելով, որ հաշվեքննվող օբյեկտի կողմից ներկայացված բացատրությունների համաձայն «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացված վճարումների մասով 1,642 դեպքում վճարումներն իրականացվել է լիազորված անձանց, իսկ հաշվեքննության ընթացքում մեզ տրամադրված շտեմարանում լիազորված անձանց վերաբերյալ տեղեկատվություններ առկա չեն, նպատակահարմար է տվյալ անձանց մասով իրականացնել ճշգրտումներ։

Միաժամանկ նպատակային արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է պահպանել վճարումների գործընթացի իրականացման << օրենսդրությամբ սահմանված դրույթները և կատարելագործել վճարումների իրականացման վերահսկողական գործընթացները։

4. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ Կառավարության 05.05.2011թ. ընդունված թիվ 665-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակները վերահաշվարկում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա, եթե՝ տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց կամ կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց 12 ամիս հետո կենսաթոշակառուն դիմել է այդ ընթացքում աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու համար.

Նպատակային արդյունավետության տեսակետից, հաշվի առնելով, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանը հասանելի է վերոնշյալ տեղեկատվությունը, պարզ չէ կենսաթոշակառուի գրավոր դիմումի անհրաժեշտությունը։ Հետևաբար առավել ճշգրիտ և նպատակային կլինի տարիքային կենսաթոշակը վերահաշվարկել և աշխատանքային ստաժում հաշվառել առանց կենսաթոշակառուի գրավոր դիմումի՝ ինքնաշխատ եղանակով։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայցվել։

5. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ Կառավարության 05.05.2011թ. րնդունված թիվ 665-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի 14-րդ կետի համաձայն՝ եթե կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) համար դիմելու դեպքում քաղաքացին դիմումին չի կցում սոցիալական ապահովության (մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության) վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճար) կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, ապա անձի համար սոցիալական վճարներ կատարած լինելը, 2013 թվականի հունվարի 1ից հետո՝ անձի կողմից եկամտային հարկ վճարած լինելը, 2018 թվականի հունվարի 1-ից հետո անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կողմից շահութահարկ վճարած լինելը ճշտում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ծառայության սաիմանած կարգով։

Հաշվի առնելով այն, որ Միասնական սոցիալական ծառայությունը առանց կենսաթոշակառուի ներկայացման հնարավորություն ունի ճշտելու վերը նշված տեղեկատվությունը, հետևաբար առավել ճշգրիտ և նպատակային կլինի կենսաթոշակառուներից չպահանջել տվյալ տեղեկատվությունը։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայցվել։

6. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ պարբերության համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու և մեկամսյա ժամկետում չհաշվառվելու դեպքում։

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, և կենսաթոշակ վճարելը վերսկսվում ţ, եթե կենսաթոշակառուն, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում, բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի: Ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու, քրեակատարողական հիմնարկում գտնվող կամ հոգեբուժական հաստատությունում կենսաթոշակ բուժվող անձի ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը:

«Պետական կենսաթոշակների մասին» << օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակառուի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակը վճարում է նախկին բնակության վայրից նրա կենսաթոշակի գործն ստանալուց հետո։

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից։

ՀՀ Կառավարության 05.05.2011թ. թիվ 665-Ն որոշմամբ հաստատված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի 56-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվում է կենսաթոշակառուի հաշվառման վայրում, իսկ կենսաթոշակառուի գրավոր դիմելու դեպքում՝ վճարող կազմակերպության գրասենյակում։

ՀՀ Կառավարության 05.05.2011թ. թիվ 665-Ն որոշմամբ հաստատված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի 81-րդ կետի համաձայն՝ եթե կենսաթոշակառուն Հայաստանի Հանրապետության տարածքում փոխում է իր հաշվառման վայրը, ապա գրավոր դիմում է հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում։ Հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ինքնաշխատ եղանակով ճշտում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները և հաշվառման նախկին վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից պահանջում է կենսաթոշակի գործը։ Գործն ստանալուց հետո ստուգում է դրանում անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունն ու կենսաթոշակի հաշվարկի ճշտությունը, և կենսաթոշակ վճարելը վերսկսվում է հաշվառման նախկին վայրում կենսաթոշակ կենսաթոշակառուի դադարեցնելու օրվանից։ Այս դեպքում կենսաթոշակի էլեկտրոնային գործը հաշվառվում է կենսաթոշակառուի հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում։

Ստացված տեղեկատվության համադրումից պարզվեց, որ.

Բանկերի միջոցով ստացված կենսաթոշակառուներից ընդհանուր առմամբ 3,872 անձի մոտ 2019 թվականի ընթացքում եղել է հաշվառման հասցեի փոփոխություն, որից 1,547 անձի մոտ եղել է նաև համայնքի փոփոխություն։ Տվյալ անձանցից 94 անձի մոտ եղել է տարածքային ստորաբաժանման փոփոխություն։

58 անձի մոտ Բնակչության պետական ռեգիստրում բացակայում է հաշվառման հասցեի վերաբերյալ գրառումներ։

Հայփոստի միջոցով ստացված կենսաթոշակառուներից ընդհանուր առմամբ 2,748 անձի մոտ 2019 թվականի ընթացքում եղել է հաշվառման հասցեի փոփոխություն, որից 933 անձի մոտ եղել է նաև համայնքի փոփոխություն։ Տվյալ անձանցից 152 անձի մոտ եղել է տարածքային ստորաբաժանման փոփոխություն։

41 անձի մոտ Բնակչության պետական ռեգիստրում բացակայում է հաշվառման հասցեի վերաբերյալ գրառումներ։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայցվել։

Ծախսային արդյունավետության տեսանկյունից

- 7. 1102-11001 Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգի սպասարկում և շահագործում (այդ թվում ԴԱՀԿ) միջոցառման (տարեկան պլանը կազմել է 79,400.0 հազ.դրամ) մեջ 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում ներաառված են թվով 3 տեղեկատվական համակարգերի մասով ծառայությունների իրականացում.

- Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման (ըստ ֆինանսավորման հայտի 50,400.0 հազ.դրամ),
- Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկում (ըստ ֆինանսավորման հայտի 22,000.0 հազ.դրամ)։

ՀՀ Կառավարության 02.05.2019թ. թիվ 519-Ն որոշմամբ 1102-11001 Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական սպասարկում շահագործում միասնական համակարգի և միջոցառմանը տրամադրվել է լրացուցիչ 6,435.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող հարկադիր կատարման ծառայության հետ ենթակա դատական ակտերի (օրինական ուժի մեջ մտած վճիռներ, դատավճիռներ) հիման վրա կենսաթոշակից կատարվող պահումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակությունն ու ստացված տեղեկատվության կիրառությունն ապահովող ենթահամակարգ (ծրագրային ապահովություն) մշակելու, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը) լրամշակելու (կատարելագործելու) ծառայություններ ձեռք բերելու նպատակով։

Նշված լրացուցիչ միջոցներով ծառայությունների ձեռք բերման նպատակով 26.11.18թ. էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտարարվել է մրցույթ, ինչի արդյունքում 20.12.18թ. «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ (այսուհետ՝ կատարող) հետ կնքվել է թիվ ՍԱԾ ԷԱՃԾՁԲ-18/1 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ ընդհանուր 6,435.0 հազ. դրամ արժեքով։ Համաձայն LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ պայմանագրի շրջանակներում 2019թ. վճարվել է 6,435.0 հազ. դրամ։

Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ձեռք բերման նպատակով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված մրցույթի արդյունքում 31.07.19թ. «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ

(այսուհետ՝ կատարող) հետ կնքվել է թիվ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/18 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ ընդհանուր 4,740.0 հազ. դրամ արժեքով։

27.12.19թ. gnumner.am կայքում հրապարակված գրության համաձայն կատարողին ծանուցվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, քանի որ Ծառայությանը հանձնված պայմանագրի արդյունքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև նույն գրությամբ ծանուցվել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կատարողի տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին։ 31.01.20թ. gnumner.am կայքում հրապարակված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի hամաձայն՝ կայացված որոշման կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժվել է, քանի որ 🛮 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ բավարար հիմքեր առկա չեն կատարողի կողմից պայմանագրի էական խախտման փաստը գնահատելու և արձանագրելու համար։ Համաձայն LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 2019թ. պայմանագրի շրջանակներում վճարում չի կատարվել։

Ծախսային արդյունավետության տեսակետից չնայած այն հանգամանքին որ տվյալ ծառայությունները ֆինանսավորման հայտի հիման վրա ներառվել են 2019 տարեկան բյուջեում, կնքվել թվականի ţ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիրը, սակայն, փաստացի տվյալ ծառայությունների մատուցումը պատվիրատուի կողմից համարվել տեխնիկական բնաթագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող և վճարում չի իրականացվել։ Ինչպես երևում է 2019 թվականի ընթացքում անհրաժեշտ համարված ծառայությունները տվյալ պայմանագրի շրջանակներում չեն իրականացվել։

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման մասով Ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտի՝

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ համակարգ) նախագծվել և մշակվել է 2011 թվականին և ներկայումս գտնվում է շահագործման փուլում։ Համակարգի սպասարկման ծառայությունների համար ՀՀ ՄԺԾ 2019-2021թթ. ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր տարի 42,000.0 հազ. դրամ։ 2018 թվականից ՀՀ կառավարության 2017թ. թիվ 928-Ն, թիվ 930-Ն և թիվ 1256-Ն որոշումներով համակարգում ներդրվել և շահագործվում են երկու նոր ենթահամակարգեր իրենց առանձնացված տվյալների շտեմարաններով և ծրագրային մոդուլներով, մասնավորապես.

- 1. Գործատուի մասին տեղեկատվության հաշվառման, աշխատանքային ստաժի հաշվարկման, աշխատանքային գրքույկների լուսապատճեների հաշվառման և պահպանման ենթահամակարգ (սպասարկման ծախս 4,800.0 հազ. դրամ)
- 2. ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու), կենսաթոշակառուի մահվան վերաբերյալ տեղեկատվության առցանց փոխանակման ծրագրային ենթահամակարգ, (սպասարկման ծախս 3,600.0 հազ. դրամ)

Նոր ենթահամակարգերի ստեղծման և ներդրման ծառայությունների գնման պայմանագրով նախատեսվել է մեկ տարվա /2018թ./ համար երաշխիքային սպասարկում, որից հետո արդեն սկսած 2019 թվականից նախատեսվում է սպասարկումը իրականացնել վճարովի հիմունքներով, արդյունքում 2019 թվականի բյուջետային հայտում համակարգի սպասարկման համար ծախսը ավելացվել է մինչև 50,400.0 հազ. դրամ նշված ենթահամակարգերի սպասարկումը ապահովելու նպատակով (ավելացում 8,400.0 հազ. դրամ)։

Նշված համակարգի սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպվել է մեկ անձից գնման ընթացակարգով մրցույթ, ինչի արդյունքում 28.06.19թ. «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ (այսուհետ՝ կատարող) հետ կնքվել է թիվ ՍԱԾ ՄԱԾՁԲ-19/11 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ ընդհանուր 40,000.0 հազ. դրամ արժեքով։ Հարկ է նշել, որ 28.06.2019թ. gnumner.am կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին

հայտարարության համաձայն նշված ծառայությունների ձեռք բերման համար նախահաշվային գինը նույնպես սահմանվել է 40,000.0 հազ. դրամ։ Համաձայն LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 2019թ. պայմանագրի շրջանակներում վճարվել է 40,000.0 հազ. դրամ։

Վերը նշվածի համաձայն տվյալ ծառայությունների մատուցման համար 2019 թ.-ի տարեկան բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 50,400.0 հազ.դրամ, սակայն մեկ անձից գնման ընթացակարգով մրցույթի ժամանակ նախահաշվային արժեքը նվազել և կազմել է 40,000.0 հազ. դրամ։

ՀՀ ՄԺԾ 2019-2021թթ. ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր տարի 22,000,000 ՀՀ դրամ սոցիալական ապահովության պետական ծառայության ներքին պորտալի սպասարկման ծառայությունների ձեռք բերման համար։

Նշված համակարգի սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված մրցույթի արդյունքում 18.06.19թ. «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ (այսուհետ՝ կատարող) հետ կնքվել է թիվ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ ընդհանուր 14,550.0 հազ. դրամ արժեքով։

19.12.19թ. gnumner.am կայքում հրապարակված գրության համաձայն կատարողին ծանուցվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, քանի որ Ծառայությանը հանձնված պայմանագրի արդյունքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև նույն գրությամբ ծանուցվել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կատարողի տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին։ 29.01.20թ. gnumner.am կայքում հրապարակված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի hամաձայն՝ կայացված որոշման կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժվել է, քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ բավարար հիմքեր հնարավոր չէ արձանագրել կատարողի կողմից պայմանագրի էական խախտման փաստը։ Համաձայն LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 2019թ. պայմանագրի շրջանակներում վճարում չի կատարվել։

Ծախսային արդյունավետության տեսակետից չնայած այն հանգամանքին որ տվյալ ծառայությունները ֆինանսավորման հայտի հիման վրա ներառվել են 2019 թվականի տարեկան բյուջեում, կնքվել Ļ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիրը, սակայն, փաստացի տվյալ ծառայություններ**ի** մատուցումը պատվիրատուի կողմից համարվել տեխնիկական բնաթագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող և վճարում չի իրականացվել։ Ինչպես երևում է 2019 թվականի ընթացքում անհրաժեշտ համարված ծառայությունները տվյալ պայմանագրի շրջանակներում չեն իրականացվել։ Նշենք, որ 2020 թվականին նշված համակարգի սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված մրցույթի արդյունքում այլ կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր ընդհանուր 17,160.0 հազ. դրամ արժեքով, ինչպես նաև համաձայն LS **FINANCE** գանձապետական էլեկտրոնային համակարգում տեղեկատվության` 2020թ. Կնքված պայմանագրի շրջանակներում վճարվել Է 17,160.0 հազ. դրամ։

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայցվել։

8. 1102-11005 – Աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու համար ծառայություններ ձեռք բերելու նպատակով ՀՀ Կառավարության 06.06.19թ. թիվ 731-Ն որոշմամբ հատկացվել է 73,500.0 հազ. դրամ։

Ծառայության կողմից տրամադրված վերոնշյալ աշխատանքների իրականացման համար մշակված տեխնիկական բնութագրում նշվել է, որ նախատեսվում է շուրջ 41,000 տնտեսվարող սուբյեկտներից հավաքել շուրջ 550,000 աշխատանքային գրքույկներ։

Նշված ծառայությունների ձեռք բերման նպատակով 02.04.19թ. հայտարարվել է բաց ընթացակարգով մրցույթ, ինչի արդյունքում 06.06.19թ. «Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ (այսուհետ՝ կատարող) հետ կնքվել է թիվ ՍԱԾ ԲՄԾՁԲ-19/1 պայմանագիրը (ալսուհետ՝ պալմանագիր)՝ 69,840.0 ընդհանուր hwq. դրամ արժեքով։ Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսվել է ստեղծել առավելագույնը 350,000 աշխատանքային գրքույկների էլեկտրոնային տարբերակներ։ 26.06.19թ. պայմանագրի կնքված թիվ 1 համաձայնագրով հաստատվել է պայմանագրի ժամանակացույցը։ 23.12.19р. կնքված վճարման պայմանագրի համաձայնագրով փոփոխվել են կատարողի պայմանագրում նշված բանկային հաշվեհամարը և պալմանագրի կանխավճարի չափը՝ պայմանագրի ամբողջ գնի փոխարեն սահմանվել է պայմանագրի գնից՝ 15,000,000 << դրամ, իսկ 20.01.20թ. պայմանագրի կնքված թիվ 3 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 210 օրացույցային օրվա փոխարեն սահմանվել է 240 օրացույցային օր։ Սոցիալական ապահովության ծառալության կողմից ներկալացված տեղեկատվության համաձայն՝ պայմանագրի շրջանակներում կողմերի միջև ստորագրված hանձնման-րնդունման արձանագրություններով կատարողի կողմից փաստացի մատուցվել է ընդհանուր հատ աշխատանքային գրքույկի մասով ծառայություն՝ ընդհանուր 23,368,728.83 << դրամ արժեքով։

Նշված աշխատանքների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 18.08.2016թ. ընդունված և 01.01.2017թ. ուժի մեջ մտած թիվ 882-Ն որոշումը, որով հաստատված աշխատանքային գրքույկները նշված մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգի 3-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետը՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, ըստ Ծառայության տարածքային բաժինների է 100 հաստատում մինչև աշխատող ունեցող գործատուների կողմից ներկայացնելու աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ժամանակացույցը՝ նշելով նախընտրելի ժամկետը։ Ժամանակացույցում ներառվում են նաև տարածքային բաժնի՝ գործընթացի համար պատասխանատու աշխատողի տվյալները (անունը, ազգանունը, ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը)։ Ժամանակացույցը տեղակայվում է ծառայության պաշտոնական կայքէջում (www.ssss.am):

Նույն կարգի 4-րդ կետով սահմանվել է, որ 100 և ավելի աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելու ժամկետները փոխհամաձայնեցվում են գործատուների հետ, կարգի 5-րդ կետով սահմանվել է, որ Ծառայությունը մինչև 2017 թվականի մարտի 1-ը պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով ծանուցում է գործատուին աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետների մասին։ Ծանուցումը պարունակում է նաև հետադարձ կապին վերաբերող տվյալներ (էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար)։

Տվյալ կարգի 3-րդ և 4-րդ կետերում նշված՝ գործատուի կողմից աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետները չեն կարող ավելի ուշ լինել, քան 2019 թվականի հունվարի 1-ը, իսկ կարգի 17-րդ կետով սահմանվել են, որ տարածքային բաժինն աշխատանքային գրքույկները գործատուին վերադարձնելու օրը համաձայնեցնում է գործատուի ներկայացուցչի հետ։ Աշխատանքային գրքույկները գործատուին են վերադարձվում դրանք տարածքային բաժին ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում։ Հաշվի առնելով տարածքային բաժին ներկայացված աշխատանքային գրքույկների թիվը՝ տարածքային բաժինը կարող է երկարաձգել սույն կետում նշված ժամկետը, բայց երկու ամսվանից ոչ ավելի ժամկետով։

Հիմք հանդիսացած ՀՀ կառավարության 18.08.2016 թվականի թիվ 882-Ն որոշման մեջ ՀՀ կառավարության 23.05.2019թ. թիվ 627-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների համաձայն, գործատուի կողմից սոցիլական ապահովության ծառայություն ներկայացնելու վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2020

թվականի հունվարի 1-ը, իսկ աշխատաքնային գրքույկները գործատուին վերադարձնելու առավելագույնը սահմանվել է 5 ամիս։

ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1935-Ն որոշմամբ վերը նշված ՀՀ կառավարության որոշման մեջ իրականացված փոփոխությամբ կարգի 3-րդ և 4-րդ որոնցով սահմանված են եղել աշխատանքների իրականացման կետերը, պատասխանատուները և կազմակերպման ժամանակացույցը, ճանաչվել են ուժը կորցրած, կարգի 5-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն որի գործատուների կողմից աշխատանքային գրքույկները ներկայացնելու միասնական տարեթվային վերջնաժամկետներ այլևս չեն սահմանվել, փոխարենը սահմանվել է, որ ծառայությունը գործատուներին ծանուցում է նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրացույցային օրվա ընթացքում, իսկ գործատուները իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց աշխատանքային գրքույկները ներկայացնում են՝ երեք, վեց, ինը, տասներկու կամ տասնիինգ ամսվա րնթացքում՝ կախված աշխատողների թվաքանակից, իսկ կարգի 17-րդ կետր շարադրվել է նոր խմբագրությամբ՝ այն է՝ աշխատանքային գրքույկները վերադարձվում են դրանք ստորաբաժանում ներկայացնելուց հետո վեցամսյա ժամկետում։

